ՌԱՄԻՍԻ ԵՌԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Պատմական Հայաստանի Գողթն գավառի Ռամիս (Ռամիք) գյուղի և նրա ճարտարապետական հուշարձանների մասին պատմական աղբյուրներում, դժբախտաբար, քիչ տեղեկություններ են պահպանվել։ Ռամիսը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրագիր գոտում, ունի գեղեցիկ գիրք և շրջապատված է բազմազան բուսականությամբ պատած լեռներով։ Սրանից ներքև՝ Ցղնայի ձորի մեջ, գտնվում են Գողթնի պատմական Մաղրա, Ուստուպի գյուղերը և այդ ձորի ամենամեծ ավանը՝ Ցղնան։

Ռամիսի միջնադարյան եռուն կյանքի մասին խոսում են նրա կանգուն և ավերակ զանազան մեծ ու փոքր հուշարձանները, ընդարձակ գերեզմանատունը։ Այս գյուղը հիշատակվում է Ագուլիսի ս. Թովմա վանքի եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի XVII դարի նշանավոր արձանագրության մեջ. Գողթն գավառի գյուղերի ու ավանների թվում[1]*։ Վանքի վերանորոգման աշխատանքներին նյութական օժանդակություն ցույց տված անձանց (ագուլիսցիների, գաշտեցիների, ցղնեցիների, փառակեցիների) շարքում նշվում են նաև ըռամեցիները (իմա՛ ռամիսեցիները)*[2]*։*

Գյուղում և նրա շրջակայքում դեռևս տեսանելի են մի քանի մատուռների, բերդերի, ջրաղացների հետքերը։ Ամենանշանավոր հուշարձանը եկեղեցին է, որը բավական լավ է պահպանված։ Վերջինս գտնվում է բարձրադիր թաղամասում և գյուղի համայնապատկերում ունի իշխող դիրք ու տեսանելի է շատ հեռվից։ Ըստ տեղացիների, եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին։ Մ. Փափազյանը, Ղ. Ալիշանը և Ե. Լալայանը այս եկեղեցին սոսկ հիշատակել են։ Մինչդեռ համեմատաբար ընդարձակ և կարևոր տեղեկություններ է հրատարակել Վ. Մ. Սիսոևը[3]*։*

Ռամիսի եկեղեցու ուսումնասիրման միակ աղբյուրը նրա վիմագրերն են, որոնք և ստույգ տեղեկություններ են հաղորդում եկեղեցու XVII դարի վերաշինության մասին։ Եկեղեցին (նկ. 1) կառուցված է սրբատաշ բազալտով և գրանիտով, ունի եռանավ բազիլիկայի հորինվածք. դահլիճը, աբսիդը և ավանդատները գտնվում են միասնական ուղղանկյուն ծավալի մեջ (նկ. 2)։ Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային։ Դահլիճն ունի երկու զույգ

---

1 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 326։ Ե. Լ ա լ ա յ ա ն, Գողթն կամ Օրդուբադի, կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան, Թիֆլիս, 1904, էջ 69 (առանձնատիպ «Ազգագրական հանդեսից»)։

2 Ագուլիսեցի Ավետիք Արասխանյանը Ս. Սարգսյանի «Ագուլեցոց բարբառը» (Զոկերի լեզուն) աշխատության վերաբերյալ գրած գրախոսականում գիտել է, որ ագուլիսեցիները Ռամիս գյուղի բնակիչներին անվանել են «ոըմսցի և ոչ ռամիսեցի» (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 9, էջ 1072)։

3 В. М. С ы с о е в, Нахичеванский край—Нахичеванская АССР (отчет о поездке летом 1927 г.), «Известия Азкомстариса», вып. 4, тетрадь 2, Баку, 1929, էջ 171—172։

խաչաձև կտրվածքով մույթեր և արևելքում ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով։ Ինտերյերը բարձր ու լուսավոր է։ Աբսիդի երկու կողմերում տեղադրված են երկհարկանի ավանդատներ, որոնց երկրորդ հարկերի մուտքերը



Նկ. 1

քողարկված են և գտնվում են առաջին հարկերի որմնախորշերի մեջ։ Առաջին հարկի ավանդատները հատակագծում համարյա քառակուսի են։



Նկ. 2

Եկեղեցու աբսիդը և ավանդատները լուսավորվում են արևելյան ճակատից՝ մեկական լուսամուտով, իսկ դահլիճը՝ երկայնական և արևմտյան պատերում տեղադրված ուղղանկյուն, բավական լայն բացվածքով երեքական լուսամուտների միջոցով։ Ընդ որում, արևմտյան ճակատի լուսամուտները երկայնական պատերի լուսամուտների համեմատությամբ ավելի բարձր են տեղադրված։ Լուսամուտների բացվածքները ծածկված են միակտուր հորիզոնական բարավորներով և դեպի ներս քիչ են լայնանում։ Դահլիճը չորս հաստահեղույս մույթերով և նրանց միջև ձգվող կամարաշարերով բաժանված է միջին մեծ և երկու փոքր նավերի։ Թաղակիր կամարները հանգչում են մույթերի և որմնամույթերի վրա։ Եկեղեցու զանգակատան ռոտոնդան կանգուն է եղել մինչև 1920-ական թթ.։ Երկթեք ծածկը մաքուր տաշած բազալտե սալե-

րով է։ Եկեղեցու հարթ բաղալտե պատերը որոշ չափով աշխուժանում են մուտքերի շուրջը քանդակված զարդագոտիներով, բարավորներից վերև և պատերի այլ մասերում ագուցված խաչքարերով ու պատկերաքանդակներով։ Պետք է ենթադրել, որ որմնանկարման համար XVIII դարում եկեղեցու ինտերյերը ծեփվել է։ Սակայն XVIII դարի որմնանկարները հետագայում քայքայվել են, ուստի XIX դարի կեսերին այն նորից է որմնանկարվել։ Եկեղեցու աբսիդում, բեմի ճակատին, ուղղանկյուն սև եզրագծերով շրջանակների մեջ նկարվել են սրբապատկերներ, իսկ մեծ նավի կամարները, աբսիդի գմբեթարդը և այլ մասերը զարդարվել են ծաղկաղարդ մոտիվներով։ Այժմ այդ որմնանկարներից միայն բեկորներ են մնում։ Ծաղկաղարդերի առանձին հատվածներ պահպանվում են աբսիդի որմնախորշերի (նկ. 3) և գմբեթարդի վրա։

Դահլիճի արևմտյան որմի վրա դեռևս տեսանելի որոշ հատվածները ցույց են տալիս, որ ծաղկաղարդերի մի մասն էլ նկարված են եղել փնջերի ձևով՝



Նկ. 3

Նկ. 4

դրված թռչունների պատկերներով կանթեր ունեցող ծաղկամանների մեջ։

Եկեղեցու ուղղանկյուն բացվածքներով մուտքերը կրում են միակտուր հորիզոնական բաղալտե բարավորներ և երիզված են քանդակազարդ կամարներով։ Արևմտյան մուտքի բարավորից վերև ագուցված է XVII դարի մի արձանագիր խաչքար։ Վերջինիս չորս տողից բաղկացած արձանագրությունը այժմ դժվարընթեռնելի է։ Այս մուտքն ունի շարվածքի մեջ ամրացված փայտե դուռ, որի վերևի մասը՝ 10—15 սմ չափով, տեսանելի է և վրան կա XVII դարի արձանագրություն։ Ուշագրավ է հարավային մուտքը, որի եզրերի քարերը և հորիզոնական բարավորը ևս միակտուր բաղալտե քարերից են։ Մուտքի շուրջը կա քանդակազարդ կամար, որը կարմրերանգ տուֆից է և ունի ճոխ զարդաքանդակներ։ Կամարի տակ, ուղղանկյուն շրջանակի մեջ, տեղադրված է աստվածամոր բարձրաքանդակը՝ մանուկը գրկին։ Այս բարձրաքանդակը ավելի հին է (թերևս XV—XVI դդ.), քան Նախիջևանի դա-

վառների մյուս հուշարձանների վրա պահպանված XVII—XVIII դդ. համանման սյուժեներով պատկերաքանդակները։

Հնառճ մի պատկերաքանդակ էլ տեղադրված է հարավային մուտքի կամարից քիչ վերև, նրա արևելյան կողմում։ Վերջինս տեղադրված է ուղղանկյուն շրջանակի մեջ, որի ներքևի մասը չի պահպանվել։ Մուտքի կամարի բարձրության ուղղությամբ, նրա արևելյան ու արևմտյան կողմերում, տեղադրված են հինգ խաչքարեր, երեքը արևելյան, իսկ երկուսը՝ արևմտյան կողմում։ Վերջիններիս արձանագրությունների մի մասը քայքայված է։

Եկեղեցու հարավ-արևելյան անկյունում, իրար կողքի կանգնեցված են երկու միակտոր կապտերանգ բազալտե սյուներ, որոնց բարձրությունը 2 մ ավելի է։ Այդ սյուների մոտ և նրանց շրջակայքում ընկած են հնառճ մշակումներով քարերի բեկորներ։ Պետք է ենթադրել, որ այս բեկորները, ինչպես նաև Եկեղեցու շրջակայքում գտնվող զանազան այլ մնացորդները, վերաբերում են այս եկեղեցու տեղում եղած վաղեմի պաշտամունքային (հեթանոսական) շինությանը։ Արևմտյան մուտքի առջև կան XVII—XVIII դդ. ութ տապանաքարեր, որոնց արձանագրությունները մեծ մասամբ թաղված են հողի մեջ։ Եկեղեցուց քիչ հեռու, նրա արևելյան կողմում ընկած է մի մանրաքանդակ (նկ. 4)։ Վերջինս պատկերում է ութանիստ գմբեթ, որի սյուներն ունեն գնդաձև խարիսխներ ու խոյակներ։ Թմբուկի ծածկը բրգաձև է, իսկ ներքևի մասում, շրջանագծի մեջ քանդակված է հավասարաթև խաչապատկեր։ Ռամիսի այս մանրաքանդակը, ինչպես տեսնում ենք, ոչ մի կապ չունի եռանավ բազիլիկայի հորինվածքի հետ։ Համանման գմբեթների մանրաքանդակներ ունեն նաև Երնջակ գավառի Նորաշենի եռանավ բազիլիկան, Շոռոթի ս. Հակոբ գմբեթավոր եկեղեցին, Գաղի ս. Գրիգորը և այլ հուշարձաններ։ Այս վերջին հուշարձանի գմբեթը XVII դարի վերանորոգման ժամանակ փոքրացվել է։ Հավանաբար եկեղեցու ծածկի անկյունային մասում կանգնեցված մանրաքանդակը պատկերում է գմբեթի նախկին ձևը։ Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դրանք սովորական և ավանդական սխեմատիկ ձևի փոխարեն մշակված են մանրամասնորեն և պատկերում են իրականում գոյություն ունեցող որոշակի կառուցվածքներ։

Ս. Աստվածածին եկեղեցուց մոտ 300 մ դեպի արևելք, գյուղի հյուսիս-արևելյան կողմում, գտնվում է Ռամիսի գերեզմանատունը։ Այն ունի XIV—XIX դդ. ավելի քան 600 տապանաքարեր, որոնց մեծ մասի արձանագրությունները այժմ քայքայված են, կամ կիսով չափ ծածկված հողի շերտով։

Ինչպես նշեցինք, Ռամիսի եկեղեցու մասին տեղեկություններ են բովանդակում նրա արձանագրությունները, որոնք հրատարակված չեն։

Այդ արձանագրություններն են.

1. Եկեղեցու ներսում, հարավային կողմի արևելյան մույթի վերևի մասի ծեփի որոշ հատվածը թափված է և երևում է եկեղեցու վերանորոգման արձանագրությունը՝ վեց տող[4].

1 ՅԻՇ(Ե)Յ(Է)Ք Ի ՔՍ ՍՈՐԵՑԻ ՈՒՍՏԱ Մ[ՈՒ]
2 ՐԱՏՆ.... ՎԱՐԴԱՆՆ....
3 ԽԱԹՈՒՆՆ ՈՐ ԲԱՁՈՒՄ ԱՇԽԱՏԵ[ՑԱՆ Ի]

4 Մեր ուսումնասիրության ժամանակ այս արձանագրության տողերի վերջին տառերը, ինչպես նաև 4-րդ և 5-րդ տողերի մի մասը ծեփի տակ էին, որի պատճառով վերծանել ենք միայն տեսանելի հատվածները։

4 ՎԵՐ(Ա)Յ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑՈՒՍ Ի Բ...
5 ԵԱՑ....
6 Թ. ՌՃԻԷ (1678)

Այստեղից հետևում է, որ եկեղեցու նորոգման աշխատանքները ղեկավարել է «ուստա» Մուրատը (նկ. 5)։



Նկ. 5

2. Աբսիդի բեմի առջև, նրա հարավային անկյան մոտ, դահլիճի հատակի մեջ թաղված է մարմարե մի տապանաքար, որի վերևի մասում կա հետևյալ արձանագրությունը.

1 ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽՈՋԱՅ
2 ՆԱԻԱՍԱՐԴԻ ՈՐԴԻ ԽՈՋ(Ա)Յ ՄՈ(Ր)ԱՏ
3 (ՓՈ)ԽԵՑԱԻ Ք(ՐԻՍՏՈՍ)Ա Ի ԹՎ ՌՃԻ (1671)

Տապանաքարի աջ և ձախ կողմերին, վերից վար քանդակված ընդարձակ արձանագրությունից կարդացվում է աջ կողմի հետևյալ հատվածը.

ՋԱՆԱՋԻՋՆ ՍԱՅ ԷՐ, ԿԱՐԴԱՑԷԼ ԷՐ ԳԻՐՍ Հ(Ա)ՅՈՑ ԵԻ....
ԳՆԱՑ ՅՈՒԱՆԳԼՍՏԱՆ ԵԻ ԱՆԴԵՆ ԴՆԱՑ...

3. Հյուսիսային ավանդատան մուտքից վերև ագուցված է մի սև քար, 16 տողից բաղկացած արձանագրությամբ, որը ևս մնացած է եղել ծեփի տակ։ Մաքրելուց հետո հնարավոր եղավ այն ընթերցել։ Երկու մասի ջարդված այս արձանագիր քարը պատի մեջ ագուցվելու ժամանակ մեծ խնամքով իրար են միացվել։ Արձանագրությունը փորագրված է գծված տողերի մեջ։ 1—3-րդ տողերը ժամանակի ընթացքում դարձել են անընթեռնելի։

4 ... Ի Թ(Ա)Գ(Ա)ՈՐ(ՈՒ)Թ(ԵԱՆ) ՊԱՐՍԻՑ Շ(Ա)Հ
5 ՍՈՒԼԷՅՄԱՆԻՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌ)Ն ՅԱԿՈԲԱ
6 ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂ(Ի)Կ(Ո)ՍԻՆ ԵԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ-

7 ԱՆ ԹԵՄԻ Տ(ԵԱՌ)Ն ՊԵՏՐՈՍ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԽՆԱՄ Վ-
8 ԱՐԴԱՊԵՏԻՆ, ... ՄԱՀՄԱՏՈՒ
9 ԱՋԱՅ ԽԱՆԻՆ, Դ(Ա)ՐՋ(ԵԱ)Լ Ա(ՍՏՈՒԱ)Ծ... ՄԱՀՏԵՍԻ Վ-
10 ԱՐԴԱՆՆ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՔՆ ԱՆՓՈՐՁ ՊԱՀԻՑԵՆ
11 ՆԱԻԱՍԱՐԴՆ, ԱՒԵՏԻՍՆ ԵՒ ԱՆՈՇՆ, ՈՐ ՍՈՔԱ
12 ԵՂԵՆ ՊԱՏՃԱՌ Վ(ԵՐ)ԱՇԻՆՈՒԹԵ(ԱՆ) Ս(ՈՒ)ՐԲ ԵԿ(Ե)ՂԵՑ-
13 ՈՅՍ, ՅԻՇ(Ե)Յ(Է)Ք ՆԱԻԱՍԱՐԴԻ ՈՐԴԻ ՀԱՆԳՈՒՅԵԼՈՅ
14 ՋԱՆԱՁԻՁՆ ԵՒ ԲԷԿՆԱՁԱՐՆ, ԱՒԵՏԻՍԻ ՈՐԴԻ ՇԽ-
15 ՖԻԱՁՆ ԵՒ ՈՒԼՈՒԽԱՆՆ, ԱՆՈՇԻ ՈՐԴԻ ՄԷԼ(Ի)ՔՆԱՁԱՐՆ
16 ՇԱՀԻՆՈՎՆ, ՅԻՇ(Ե)Յ(Է)Ք ՎԱՐԴԱՆԻ ԿՈՂ(Ա)Կ(Ի)Յ ԳՕՁԱՆ,

Պատմական անձերի հիշատակումը հնարավորություն է տալիս ճշտելու այս վավերագրի փորագրման մոտավոր տարեթիվը։ Հայտնի է, որ Շահ-Սուլեյմանը թագավորել է 1666—1699 թթ., իսկ Հակոբի կաթողիկոսության տարիները 1655—1680 թթ. են։ Վիմագիր ստույգ տվյալով հայտնի է նաև արձանագրության մեջ հիշատակվող Նավասարդի հանգուցյալ որդու՝ Ջանազիզի (որին անվանել են նաև խոջա Մուրադ) մահվան տարեթիվը (1671)։ Հետևաբար ըստ այս տվյալների և եկեղեցու նորոգմանը վերաբերող մյուս վիմագրերի տարեթվերի (1677—1678), արձանագրությունը գրվել է 1677 կամ 1678 թ.։ Ռամիսի եկեղեցու վերաշինության կազմակերպիչներ մահտեսի Վարդանը, Նավասարդը, Ավետիսը և Անուշը մի շարք այլ ռամիսեցիների հետ մեծ օժանդակություն են ցուցաբերել նաև Ագուլիսի ս. Թովմա վանքի վերանորոգման գործին (XVII դ. II կես)։ Այդ մասին վկայող ութ տողից կազմված արձանագրությունը տեղադրված է ս. Թովմա վանքի եկեղեցու արևմտյան ճակատում.

1 ՅԻՇԵՑԷՔ ԸՌԱՄԵՑԻ ԽՕՋԱ
2 ԱՒԵՏԻՍՆ ԵՒ ԵՂԲԱՐՔՆ ԻՒՐ՝ ՆԱԻԱ-
3 ՍԱՐԴՆ ԵՒ ԱՆՈՒՇՆ, ԵՒ ԷՐԵՑՓՈԽ-
4 ԱՆ ՎԱՐԴԱՆՆ, ԵՒ ԳՐԻԳՈՐՆ ԵՒ
5 ՊԵՏՐՈՍՆ, ՓԻՐԻՆ, ՆՈՒՐԻՆ, ԱՐ-
6 ՋԱՆԻՆ, ՎԱՐԴԱՆՆ, ԲԱՐԱՔԵԱՁՆ
7 ԳՐԻԳՈՐՆ ԵՒ Տ(Ե)Ր ԳՐԻԳՈՐՆ, ՈՐ ԲԱՁ-
8 ՈՒՄ ՕԺԱՆԴԱԿ ԵՂԵՆ Ս(ՈՒՐ)Բ ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑՅ(ՈՒ)Ս[5],

4. Եկեղեցու հարավային մուտքի արևմտյան կողմում տեղադրված քանդակազարդ որմնափակ խաչքարի վրա կա երեք տող արձանագրություն. 1-ին տողը զետեղված է խաչի խորանի վերևի մասում, մյուս երկուսը՝ խաչի պատկերի ներքևի մասի մակերեսին։ Արձանագրությունը հողմահարված է.

1 ԹՎ ՌՃԻ[Զ] (1677)
2 ՅԻՇ(ԱՏԱԿ) Է ԽԱՉՍ ԽՕՃԱ Ն...
3 ... ԿՈՂ(Ա)ԿԻՑ Յ...

5. Նախորդից դեպի արևմուտք տեղադրված խաչքարի վրա փորագրված է հինգ տող արձանագրություն՝ երկու տողը խաչապատկերի վերևի, իսկ մյուս երկուսը՝ ներքևի մասում։ Խաչապատկերի վերին թևի աջ և ձախ կողմերում քանդակված է թվականը.

5 Արձանագրությունը հրատարակել են՝ Ղ. Ալիշանը (նշվ. աշխ., էջ 329) և Ե. Լալայանը (նշվ. աշխ., էջ 71), սակայն «ԸՌԱՄԵՑԻ»-ն կարդացել են Ռամեցի, «ԱՒԵՏԻՍՆ»՝ Աւետիք, «ԱՆՈՒՇՆ»՝ Նաուշն (Նաուշն?)։

1 Թ ՌՃԻԶ (1677)
2 ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է [ԽԱՉՍ]
3 .....
4. ՄԱՀՏԵՍԻ ՂԱ...
5 ԵԻ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԱՄԻՆ

6. Մուտքի կամարի արևելյան կողմում, անմիջապես կամարի կողքին տեղադրված խաչքարի ներքևի թևի երկու կողմերում քանդակված է՝

[Թ Ռ]ՃԻԶ (1677)

Խաչքարի ներքևի մասում զետեղված է երկու տող. երկրորդը քայքայված է.

1 ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է Խ(Ա)ՉՍ Ի...
2 . ԱԿՐ...

7. Այս խաչքարից հինգ քար դեպի արևելք տեղադրված է մեկ այլ խաչքար, որն ունի չորս տող արձանագրություն՝ առաջին տողը խաչի խորանի վերևի մասում, իսկ մնացածը՝ ներքևի հարթ մակերեսին.

1 ԹՎ ՌՃԻԶ (1677)
2 ՅԻՇ(ԱՏԱԿ) Է Խ(Ա)ՉՍ ՍԱՅԷՓՇԻ...
3 ՄԱՀՏԵՍԻ ՀԱԿՈԲԻՆ ԵԻ Կ(Ո)ՂԱԿԻՑ ԳՈՒԼԻ-
4 ԽԱՆԻՆ

8. Հիշյալից մի քիչ դեպի արևմուտք տեղադրված խաչքարն ունի երեք տողից կազմված քայքայված արձանագրություն.

1 ԹՎ ՌՃԻ[Զ] (1677)
2 [ՅԻՇ(Ա)ՏԱԿ Է Խ(Ա)ՉՍ]...
3 ... ԻՆ

Ռամիսից մոտ 4—5 կմ ձորն ի վար, դեպի Մազրա գյուղը, գտնվում է ս. Սարգիս վանքի եկեղեցին։ Այն տեղադրված է անդնդախոր ձորի հարավային կողմի լեռներից մեկի լանջին, անմիջապես Ռամիսից դեպի Ցղնա իջնող արահետ-ճանապարհին։ Ս. Սարգիս եկեղեցին, որը կառուցված է սրբատաշ և ճեղքված որձաքարով, փոքրածավալ և փայտածածկ միանավ հուշարձան է։ Հատակագիծը գրեթե քառակուսի է։ Արևելյան կողմում ունի կիսաշրջանաձև աբսիդ առանց ավանդատների։ Եկեղեցու ծածկը, պատերի վերին մասերը քայքայված են։ Միակ մուտքը գտնվում է հյուսիսային ճակատում և հասարակ ձև ունի։ Մուտքից քիչ վերև տեղադրված է մի փոքրիկ խաչքար, որի խաչի ներքևի թևի երկու կողմերում քանդակված արձանագրությունը քայքայված է։

ТРЕХНЕФНАЯ БАЗИЛИКА И НАДПИСИ РАМИСА

А. А. АЙВАЗЯН

(Резюме)

Рамис—одно из древних поселений исторической области Гохтн. Церковь Сурб Аствацацин (св. Богородицы) в Рамисе была заново отстроена в 1677—1678 гг. силами рамисских ходж. По данным публикуемых нами надписей, строительные работы были произведены под руководством мастера Мурада. Церковь представляет собой распространенный в Армении в XVII в. тип культовых зданий—трехнефную базилику с двумя парами пилонов. Надписи датируются 2-й половиной XVII в.